

Կ Ա Ր Գ

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ (ԴԻՄԱԾ) ՊԱՑԻԵՆՏԻ ԿԱՄ
ԴԻԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են բժշկական հաստատություն տեղափոխված պացիենտի, ինչպես նաև դիակի վերաբերյալ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից Հայաստանի Հանրապետության ոստիկանություն հաղորդում ներկայացնելու հետ կապված հարաբերությունները:

2. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները (այսուհետ՝ բժշկական հաստատություն) պարտավոր են սույն կարգի համաձայն բժշկական հաստատություն տեղափոխված (դիմած) պացիենտի (ինչպես նաև դիակի) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը հաղորդում ներկայացնել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված դեպքերում:

3. Պացիենտի՝ բժշկական հաստատությունում թողնված հագուստը և անձնական իրերը պահպանվում և վարույթն իրականացնող մարմնի պահանջով տրամադրվում են վերջինիս:

4. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված դեպքերի համար բժշկական հաստատությունում վարվում է գրանցամատյան՝ համաձայն ձևի (այսուհետ՝ գրանցամատյան), որը կարվում, համարակալվում և կնքվում է բժշկական հաստատության և տվյալ վարչական շրջանի ոստիկանության բաժնի կնիքով:

2. ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ (ԴԻՄԱԾ) ՊԱՑԻԵՆՏԻ ԿԱՄ ԴԻԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսված դեպքերում բժշկական հաստատությունները հաղորդում են ներկայացնում իրենց գտնվելու վայրի վարչական շրջանի ոստիկանության տարածքային բաժնի հերթապահ մաս կամ Հայաստանի Հանրապետության ոստիկանություն՝ 1 02 հեռախոսահամարով:

6. Բժշկական հաստատության ղեկավարը կազմակերպում է հաղորդում տալու գործընթացը և նշանակում անձ, որը պատասխանատու է լինելու Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը ժամանակին հաղորդում ներկայացնելու համար:

7. Պացիենտի՝ բժշկական հաստատություն տեղափոխվելու (դիմելու) պահից մեկ ժամվա ընթացքում պատասխանատուն հեռախոսագանգի միջոցով տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը, իսկ ակնհայտ բռնի, հակաօրինական գործողության հետևանքով առաջացած վնասվածքով պացիենտի, ինչպես նաև դիակ տեղափոխելու դեպքում՝ անհապաղ:

8. Հաղորդումը պետք է պարունակի՝

1) պացիենտի վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը՝

ա. գրանցամատյանի հերթական համարը,

բ. անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, հեռախոսահամարը (եթե այն հայտնի է բժշկական հաստատություն դիմելու կամ տեղափոխվելու պահին),

գ. հաշվառման վայրը կամ մշտական բնակության վայրը (եթե այն հայտնի է բժշկական հաստատություն դիմելու կամ տեղափոխվելու պահին),

դ. բժշկական հաստատություն տեղափոխվելու (դիմելու) օրը, ժամը,

ե. պացիենտի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ, դրա հնարավոր պատճառները, առողջական վիճակի ծանրության աստիճանը.

2) դիակի դեպքում՝ հետևյալ տեղեկատվությունը՝

ա. գրանցամատյանի հերթական համարը,

բ. բժշկական հաստատություն տեղափոխելու օրը, ժամը,

գ. դիակը տեղափոխած անձի (անձանց) և տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալները (հայտնի լինելու դեպքում):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

